

## ԳՐԱԿԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԱՆՑԱՆ  
ԶՈՐՅՈՒԹ ԿՈՆՖԵՐԱՆԾԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

1972 թվականի Հոկտեմբերի 3—7-ը Երևանում տեղի ունեցավ Գիտության պատմության անդրկովկասյան IV կոնֆերանսը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեց Աղրբեկանի, Հայաստանի, Վրաստանի, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և միության այլ քաղաքների գիտության ավելի քան 200 պատմաբան: Եվ ահա ուսւերին լեզվով լույս է տեսել կոնֆերանսի նյութերի ժողովածուն\*, ուր զետեղված է պլենար ու սեկցիոն նիստերում և կոլոկվիումներում կարդացված 95 զեկուցում:

Կոնֆերանսի կազմկոմիտեի նախագահ, Գիտության պատմության միջազգային ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Գ. Բ. Պետրոսյանի բացման խոսքում ընդգծվում է ՍՍՀՄ կազմավորման հեղափոխող դերը բոլոր հանրապետությունների մշակութային և տնտեսական կյանքում: Մասնավորապես, աննախընթաց ծաղկում է ապրել գիտությունը, և դիտության պատմաբանների գլխավոր խնդիրներից մեկն է ավելի խորն ուսումնասիրել և լուսարաններ սովորական գիտության և տեխնիկայի զարգացման ուղիներն ու օրինաշափությունները: Այդ գործում որոշակի ներդրում ունեն անդրկովկասյան հանրապետությունների գիտության պատմաբանները, որոնք աշխատում են սերտ համագործակցության և փոխըմբռնման պայմաններում: Դրա վառ ապացուցն են ավանդական դարձած գիտության պատմության անդրկովկասյան կոնֆերանսները:

\*Труды IV закавказской конференции по истории науки, Ереван, 1974.

Տպագրված է Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի ողջունի խոսքը կոնֆերանսի մասնակիցներին:

«Պէճնար զեկուցումներ» խորագրի տակ զետեղված է հինգ զեկուցում: Դ. Կ. Զիկիայի զեկուցումը նվիրված է Սովետական վրաստանում ֆիզիկայի զարգացման պատմությանը: Հեղինակը համառոտակի ծանոթացնում է ատոմամիջուկի, բարձր էներգիաների մասնիկների, տիեզերական ճառագայթների, պինդ մարմնի և կիսահաղորդիչների ֆիզիկայի, քվանտային էլեկտրադինամիկայի, գրավիտացիայի, պլազմայի հետազոտության ուղղությամբ հանրապետությունում կատարված տեսական և փորձարարական աշխատանքներին:

«Նավթագիտությունը Ադրբեջանում 50 տարում (1922—1972 թթ.)» զեկուցման մեջ Շ. Ֆ. Մեխտիկը հիմնականում անդրադառնալով նավթի երկրաբանության զարգացման հարցերին, նշում է նաև նավթային հորատանցքերի հորատման և նավթագազարեր հանքավայրերի շահագործման և նավթաքիմիայի բնագավառում ադրբեջանցի գիտնականների նվաճումները:

Բնագիտության և տիխնիկայի պատմության գծով անդրկովկասյան հանրապետություններում տպագրված աշխատությունների համառոտ տեսության մի փորձ է Ս. Յա. Պլոտկինի զեկուցումը, ուր հեղինակը մատենագիտական հարուստ նյութի հիման վրա կատարում է պատմագրական վերլուծություն, միաժամանակ անդրկովկասյան գիտության պատմաբանների ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ անհրաժեշտ է նաև քննարկել հենց իր՝ բնագիտության և տեխնիկայի պատմության՝ իրեն ինքնուրույն դիսցիլինի զարգացման միտումները:

Արտադրության հոգենոր պոտենցիայի զարգացմանն ու գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական պրոբլեմներին է նվիրված Ս. Ս. Թովմասյանի զեկուցումը:

«Սոցիալական պատմությունը և գիտության պատմությունը» զեկուցման մեջ Ն. Ա. Ֆիգուրովսկին քննարկում է բնական գիտությունների զարգացման պատմական պրոցեսի մի բանի առանձնահատկությունները, գիտական առաջադիմության գլխավոր գործոնները, գիտության զարգացման և առանձին հայտնագործությունների պլանավորման և կանխատեսման հարցերը:

«Գիտության տրամարանության և մեթոդաբանության դերը պատմագիտական հետազոտություններում» թեմայով կոլոկիումի

զեկուցումների վերնագրերն են՝ «Տրամարանությունը և նրա տեղը դիտությունների սիստեմում» և «Գիտության օրյեկտի մոդելային պատկերում»։ Առաջինում, որի հեղինակն է Գ. Ա. Բրույանը, տրամարանության գիտության առաջադրած հարցերը բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին ներքին հարցերի բնույթը պարզաբանելիս հեղինակը հարկ է համարում տարրերել երկու մոտեցում՝ դիախրոնիկ և սինխրոնիկ։ Արտաքին պրոբլեմները ենթադրում են մի կողմից տրամարանական օրենքների և կանոնների խմացարանական ստատուի հարցի, իսկ մյուս կողմից՝ այլ գիտությունների հետ տրամարանության առնչության քննարկում։ Այնուհետև լուսարանվում են հիշյալ պրոբլեմների սկզբունքային կողմերը երկրորդ հետազոտության հեղինակը՝ Ռ. Ս. Շագուրին փորձ է անում գիտության օրյեկտի վերընթաց զարգացումը ներկայացնել զյուրքը բռնկելի տարածական պատկերի ձևով՝ կոռոդինատների այնպիսի համակարգում, որը նկատի է առնվում ժամանակի գործոնը։ Այդպիսի համակարգը հեղինակի ենթադրությամբ թույլ է տալիս խիստ հետազոտականորեն իրականացնել դիալեկտիկական զարգացման սկզբունքը, որը գիտության օրյեկտի էվոլյուցիայի պատկերման և գիտությունների դասակարգման մեթոդարանական հիմքն է։

«Գիտնականի անհատականությունը գիտության պատմության մեջ» կոլոկվիումը ներկայացված է Ս. Հ. Հարությունյանի նույնանուն հետազոտությամբ։

XIX դարի վերջի գիտնական-երկրաբան, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-ադամ Անդրեաս Արծրունու գիտական կենսագրությանն է նվիրված է. Գ. Մալխասյանի և Վ. Մ. Մանույանի ղեկուցումը։

Գիտության առանձին բնագավառների պատմությունը ժողովածուում ներկայացված է ըստ համապատասխան սեկցիաների։

#### ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Գ. Գ. Կուլիկը «Անտիկ ատոմիզմի գաղափարի ճանաշողական ֆունկցիան» ղեկուցման մեջ ընդգծում է մտածողության ատոմիստական ոճի անբակտելի կապը գիտության զարգացման ընթացքի հետ և նրա ոչ անցողիկ էվրիստիկական բովանդակությունը։ Ներկայումս ճանաշողության կարևորագույն բնագավառների (տարրական մասնիկների ֆիզիկա, տիեզերաբանություն) սահմանագծին կատարվում են «հերթական առամի» որոնումներ։

Այդ որոնումներում իր էվլիստիկական ֆունկցիան է պահպանում անտիկ ատոմիզմի վերացական գաղափարը:

Վ. Կ. Զալոյանի զեկուցումը նվիրված է հին աշխարհի և միջնադարի գիտական մտքի զարգացման ուղիներին: Համադր-րելով գիտության զարգացումը արևմուտքում և արևելքում, նա գալիս է այն եղբահանգմանը, որ արևմուտքի երկրների հետ քրիստոնեական արևելքի մշակութային կապը փիլիսոփայության զարգացման մեջ կազմել է ժառանգորդության՝ արևելքից արև-մուտք գնացող մի գիծ: Դրան զուգընթաց եղել է և մի այլ գիծ, որը կապել է իրանա-արարական աշխարհի գիտությունը արև-մուտքի մշակույթի հետ: Արաբական և արաբալեզու մշակութային աշխարհը ստեղծագործաբար յուրացրել է հելլենիստական աշ-խարհի, ինչպես նաև Եգիպտոսի, Սիրիայի, Իրանի գիտությունը և ստեղծել է որակապես նոր գիտություն, որը հետագայում դարձավ արևմտյան երկրների սեփականությունը:

#### ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

«Միջնադարյան Անդրկովկասի մեխանիկան» զեկուցման մեջ Ա. Ն. Բոգոլյուբովը նշում է միջնադարյան Անդրկովկասի մեխա-նիկների և ճարտարապետների մեծ վաստակը կիրառական մեխանիկայի կազմավորման գործում:

Լ. Ի. Դովլաթովայի և Գ. Զ. Կովիկայի համատեղ զեկուցումը նվիրված է XIII դարի վերջի և XIV դարի սկզբների թագուհոցի գիտնական Կուտբեդիկն Շիրազի տրակտատում այսպես կոչված «Արիստոտելի անիվի» պարագորգությունը:

Ն. Մ. Մերկովայի զեկուցման մեջ տրվում է մեխանիկայի պատմության վերաբերյալ Ն. Ե. Ժուկովսկու մի շարք աշխա-տանքների համառոտ տեսությունը, և այդ աշխատանքները դիտվում են իրեւ առաջին քայլ՝ գիտության պատմության մեջ գիտնական-մեխանիկների դերի լուսաբանման հարցում:

Լ. Ն. Նուրիկայի աշխատանքում քննարկվում է XIX դարում ուշականի տարածության գաղափարի զարգացման պատմու-թյունը:

Գ. Բ. Պետրոսյանի զեկուցումը նվիրված է երկարության հին հայկական շափերին: Ցուց տալով երկարության շափերի բացատրության հարցում որոշ հետազոտողների սխալ մոտեցումը, հեղինակը նորովի է մեկնաբանում VII դարի հայկական աղբյուր-ներում եղած երկարության շափերը:

Մ. Մ. Ստեփանյանը տալիս է XIX դարի երկրորդ կեսի Հայերեն մաթեմատիկական դասագրքերի ստեղծման պատմությունը:

ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՋԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Ա. Յ. Ամափունու, Գ. Մ. Ղարիբյանի և Ռ. Ա. Սարգսարյանի համատեղ զեկուցման մեջ տրվում է Հայաստանում միջուկային և գերմիջուկային ֆիզիկայի ուղղությամբ կատարված հետազոտությունների վերլուծությունը:

Պ. Գ. Ասատիանին ամփոփ կերպավ տալիս է Անդրոնիկաշվիլու փորձարարական հետազոտությունների արդյունքները, որոնք հասպառում են հելիում—2-ի երկկամպոնենտության մասին կանգառի տեսությունը. հեղուկ հելիումի մածուցիկությունը նրա նորմալ կոմպոնենտի մածուցիկությունն է:

Ի. Գ. Բաղրայան օրիդինալ հետազոտությունների տեսության հիման վրա վերլուծում է օպտիկական սարքերի թողունակության տեսության և պրակտիկայի զարգացումը XIX դարում:

Ա. Բ. Վելյովը և Ս. Ի. Կուլիկեան շարադրում են Ադրեզանում ֆիզիկական հետազոտությունների սկզբնավորման և զարգացման ընթացքը:

Լ. Մ. Գուտների զեկուցման թեման է՝ «Քվանտային տեսությունների մեկնարանությունների զարգացման շուրջ»: Հեղինակը խոսում է այն դժվարությունների մասին, որ ծառանում են քվանտային էքսպերիմենտների անմիջական արդյունքների խորը տեսական մեկնարանությունների ժամանակ: Այդ դժվարությունները արտացոլում են այն հսկայական կապը, որ զոյլությունը ունի քվանտային պրոցեսների խորքային հատկությունների և միկրոսկոպային պայմաններում նրանց դրսերման միջև:

Է. Լ. Դանիելյանը ծանոթացնում է Անանիա Շիրակացու կողմից քաղցեական աստղագուշակության բննադատությանը:

Ինդուկցված ճառագայթների քվանտային և դասական տեսությունների պատմությանն է նվիրված Ի. Մ. Դունսկայայի աշխատանքը: Ա. Ֆ. Կոնոնկովը լուսաբանում է անդրկովկասյան հանրապետություններում ֆիզիկայի պատմության զարգացման գործում Մոսկվայի համալսարանի դերը:

Պ. Ս. Կուդրյավցելը լուսաբանում է Արիստոտելի գործունեության նվազ հայտնի կողմը, որ վերաբերում է գիտության պատմությանը: Արիստոտելը գիտության պատմության՝ իրեւ գիտական

գիսցիպլինի հիմնադիրն է. նա մշակել է հին շրջանի գիտության պատմությունը, առաջ է քաշել ու լուծել է գիտության պատմության փոխամենութալ հարցերը Բնության մասին գիտության զարգացման տենդենցը, որ սահմանել է Արիստոտելը, հաստավում է ֆիզիկայի զարգացման ողջ ընթացքով, և կարելի է անվանել «Արիստոտելի օրենք»:

Մ. Մ. Կուշմենտի զեկուցումը նվիրված է Էլեկտրամագնետիզմի Վեբերյան օրենքին և գրավիտացիոն պարադրուսի նախնական ձևակերպմանը:

#### ՔԻՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Գ. Դ. Ամիրկուլիկի և Զ. Ս. Զուլֆուգարլիկի զեկուցումը նվիրված է քիմիայի և քիմիական արտադրության պատմությանը Աղրբեցանում XIX վերջին, XX դարի սկզբներին:

Ն. Ա. Բարիյանի զեկուցումը ծանոթացնում է Հայկական ՍՍՀ-ում նուրբ օրգանական քիմիայի սկզբնավորմանն ու զարգացմանը:

Խ. Կ. Գալֆայանը տալիս է Արարատյան որդան կարմրից ներկ ստանալու պատմությունը և ծանոթացնում այդ միջատի հայտնաբերման ու նրանից ներկ ստանալու հետազոտությունների արդյունքներին:

Հ. Գ. Դեմիրճօղլյանը հետաքրքրական փաստեր է հայտնում վալենտականության և միջուկային պարբերականության ասպարեզում հայ ինքնուս գիտնական Վ. Ս. Դեմիրճօղլյանի աշխատանքների մասին: Վ. Ս. Դեմիրճօղլյանը առաջիններից մեկն էր, որ քվանտային մեխանիկայի գոյացումից շատ առաջ կարողացավ բացահայտել ատոմների պարբերականության պատճառները, տեսականորեն հիմնավորել Մենդելեևի օրենքը, կանխագուշակել իզոտոպների առկայությունն ու անդրուրանային տարրերը:

Աղրբեցանում ադսորբեստների և կատալիզատորների սինթեզի ու հետազոտության պատմությանը է նվիրված Զ. Գ. Զուլֆուգարովի, Լ. Շ. Զուլֆուգարովայի, Գ. Դ. Ամիրկուլիկի զեկուցումը:

Զ. Ի. Զուլֆուգարլին ծանոթացնում է աղրբեցանական գրականության դասականների աշխատանքներում արծարծված քիմիական հայացքներին:

Կ. Ի. Կուլնեցովի զեկուցման մեջ՝ «Քիմիայի պատմությունը և նյութի հատկությունների գենեզիսի պրոբլեմների պատմու-

թյունը», նշվում է, որ հատկությունների գենեգիսի պրոբլեմի ուսումնասիրությունը քիմիայի բոլոր բաժինների պարտադիր խնդիրն է, իսկ պրոբլեմի լուծումը կարևոր է ինչպես պատմա-քիմիական նյութի դասակարգման, այնպես էլ քիմիայի բոլոր հիմնական տեսությունների, այդ թվում, օրինակ, քվանտային քիմիայի ստատուսի և գերի սահմանման համար:

Ա. Ռ. Մելիք-Աղամիրյանը քննարկում է կալցիումի կարբիդի արտադրության զարգացման փուլերը Հայաստանում և նշում այդ արտադրության պատմական նշանակությունը Հայկական ՍՍՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման դործում։ Խուսա-տանում և Միացյալ Նահանգներում քիմիայի և նավթամշակման պատմության մի շրջանին է նվիրված Յա. Մ. Խարկինի գեկու-ցումը։

Գ. Գ. Սաֆարյանը և Վ. Ի. Կուզնեցովը տալիս են Հայկական ՍՍՀ-ում ածխաջրածինների բլորացման հետազոտական աշխա-տանքների վերլուծությունը։

Ի. Ռ. Մելիքխանովը և Մ. Ն. Նազիմովան իրենց համատեղ զեկուցման մեջ քննարկում են անօրգանական նյութերի քիմիական հետազոտության մեթոդների զարգացումը հին աշխարհից մինչեւ XX դարը։

Մետաղագործության ծնունդի պրոբլեմին է նվիրված Ն. Ա. Ֆիգորովսկու զեկուցումը։ Նա համամիտ է այն հետազոտող-ներին, ովքեր հակված են մետաղագործական տեխնիկայի օրրանը համարել հին Հայաստանը։

#### ԵՐԻՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՇԱՆՑԻՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ.

Լ. Ա. Ավագյանը լուսաբանում է Անդրկովկասում երկրա-րանական գիտության և երկրաբանական գործի զարգացման մեծ երախտավոր Հ. Տ. Կարապետյանի գործունեությունը Հայաստա-նում։

Աղրեջանում նավթի երկրաբանության կազմավորմանն ու զարգացման պատմությանն է նվիրված Ադ. Ա. Ալիկի և Ք. Ի. Միրզուկի զեկուցումը։

Կ. Ա. Ալիզադեն, Տ. Ա. Մամեդովը և Աք. Ա. Ալիզադեն տալիս են Աղրեջանի մեղոնայնողոյի բիոստրատիգրաֆիական հետազո-տությունների պատմությունը, իսկ ի. Վ. Բատյուշկովան՝ Կովկասի երկրաշարժերի ուսումնասիրության պատմությունը նախասովետական շրջանում։

Թ. Վ. Բրոլիձեն լուսաբանում է Կովկասում ծանրաշափական, մագնիսական և օդերեսութաբանական դիտումներ կատարած առաջին գիտական արշավախմբի աշխատանքները:

Է. Գ. Մալխասյանը ծանոթացնում է Գերման Արիխի՝ Հայաստանի երկրաբանական ուսումնասիրության գիտական հիմքերը դրած երկրաբանի, բազմակողմանի գործունեության հիմնական փուլերին:

Վ. Մանոյանը տալիս է Երկրի կառուցվածքի վերաբերյալ պատկերացումների սկզբնավորումն ու զարգացման ընթացքը հին Հայաստանի տարածքում:

Ա. Ի. Մախմուդովի զեկուցումը նվիրված է Ադրբեյչանի հանքերում կորալտի և նրա միներալների հայտնագործման պատմությանը, Վ. Ա. Մելքոնյանինը՝ պղնձի մետալուրգիայի զարգացման պատմությանը Հայաստանում:

Պ. Ա. Սահակյանը բնութագրում է երկրաբանական գիտության պատմության մեջ ֆորմացիաների ուսմունքի նշանակության մասին պատկերացումների էվոլյուցիան: Նա մատնանշում է, որ սովորական հետազոտողների զանքերով հաջողությամբ զարգանում է ֆորմացիաների մասին ուսմունքը. այդ զարգացումը ցույց է տալիս, որ ֆորմացիոն վերլուծության սկզբունքն ու մեթոդները ձեռք են բերել մեթոդաբանական նշանակություն, իսկ վերջինս վճռական տեղ է գրավում երկրաբանա-պատմական և գենետիկական հետազոտություններում:

Երկրաբանության մեջ արդի գիտատեխնիկական հեղաշըռմանն է նվիրված Վ. Վ. Տիխոնիրովի զեկուցումը: Նրա բնորշմամբ այդ հեղաշրջումը պայմանավորված է ֆունդամենտալ գիտությունների բնագավառում կատարված խոշոր հայտնագործություններով: Երկրաբանության տարրեր ճյուղերում արված հայտնագործություններին հանգեցրին սկզբունքորեն նոր գաղափարների մշակմանը, որոնք հեղափոխեցին երկրաբանական միտքը:

Գ. Ֆ. Տրիփոնովն առանձնացնում է նստվածքային ապարատաշացման էվոլյուցիայի մասին պատկերացումների զարգացման հիմնական փուլերը:

#### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Դ. Ս. Աբրահամյանի զեկուցումը նվիրված է XIX դարի երկրորդ կեսում Հայաստանում Պ. Ա. Զիխաշովի աշխարհագրական հետազոտությունների նկարագրությանը:

Ա. Ա. Ասլանյանը ծանոթացնում է օդերեռութարանության վերաբերյալ առաջին հայկական աղբյուրին, որը պատկանում է Անանիա Շիրակացին:

Գ. Ս. Դիրբովան բացահայտում է XIX դարում Կովկասի պաղմա-վիճակագրական տեսությունների գերը երկրամասի բնությունը ճանաչելու գործում:

Մերձկասպյան Անդրկովկասի օրինակով՝ Ն. Գ. Կոմարովան տալիս է պատմա-աշխարհագրական նյութերի նշանակությունը ներկայիս լանդշաֆտների դարպացման ուսումնասիրության գործում:

Գ. Բ. Նազարեթյանը վերլուծում է Ծուսական աշխարհագրական բնկերության Կովկասի բաժանմունքի պարբերական մամուլում Հայաստանի վերաբերյալ հրապարակված նյութերը:

Ա. Գ. Զրելաշվիլին տեղեկություններ է հայտնում 1902 թվականին դեպի Մեծ Արարատի գագաթը կազմակերպված արշավախմբի մասին: Բայց հեղինակի արշավախումբը Մեծ Արարատի գագաթին տեղակայել է օդերեռութարանական կայան:

#### ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Գ. Գ. Ավագյանը հին հայկական ձեռագրերում պեհպանված նյութերի հիման վրա նկարագրում է հին և միջնադարյան Հայաստանում մորեկի կատարած ավերածությունները:

Մ. Կ. Գանիկի, Ա. Ա. Մամեդովի և Մ. Բ. Վելյովի զեկուցումը նվիրված է Ազրբեջանում կենդանիների և թոշունների միքանի անակրոր և այլ վարակիչ հիվանդությունների էպիզոդուլոգիայի և միկրոկենսաբանության ուսումնասիրության պատմությանը:

«Դարալազյազի և Եղեգնաձորի պանիրների արտադրության հարցի շուրջ» համատեղ զեկուցման մեջ Լ. Ա. Երզնկյանը, Ա. Տ. Մաղաբյանը, Մ. Շ. Փաշլեանյանը և Ա. Տ. Քալաշյանը ծանոթացնում են պանիրների միկրոկենսաբանական և կենսաբանական հետազոտություններին, ինչպես նաև գործարանային եղանակով այդ պանիրների արտադրության իրենց մեթոդին:

Բ. Ն. Մաղուրմովիչն անդրադառնում է Կովկասի ֆաունայի ուսումնասիրության ուղղությամբ ուկրաինացի գիտնականների աշխատանքներին:

«Ա. Շահրիմանյանի տերմինարանական բուսաբանական բառարանը» գեկուցման մեջ Կ. Ս. Մարշանյանը նշում է, որ դա հայերեն բուսաբանական տերմինները ի մի բերելու առաջին փորձն է: Բառարանը գրվել է XIX դարի սկզբներին:

Արարատյան որդան կարմրի կենսաբանական նկարագրի և օչախների հայտնաբերման աշխատանքների մասին է պատմում Մ. Ա. Տեր-Գրիգորյանի ղեկուցումը:

Դ. Ն. Տետերենիկովա-Բարայանի և Ա. Ա. Բարայանի ղեկուցումը նվիրված է Հայկական ՍՍՀ-ում սնկարանական հետազոտությունների պատմությանը, Ա. Դ. Թորոսյանինը՝ կյանքի էության հասկացության էվոլյուցիային:

#### ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Ի. Ա. Անդրիաշվիլու, Ռ. Ի. Կախիձեի և Ֆ. Ն. Տավածեի ղեկուցումներում քննարկվում են հին ժամանակներից ի վեր վրաստանի տերիտորիայում քանդակադրոշման արվեստի տեխնոլոգիայի առանձնահատկությունները:

Էներգետիկայի, հաշվողական տեխնիկայի, սարքաշինության, էլեկտրամեքենաշինության զարգացման պատմությանն են նվիրված Ս. Ա. Սապարովի, Ա. Գ. Հարությունյանի, Վ. Խ. Բեգլարյանի, Լ. Շ. Հարությունյանի ղեկուցումները:

Հայկական ՍՍՀ-ում շինանյութերի հետազոտման, հանույթի և կիրառման կազմակերպման գործում ճարտարապետ Գավիթ Զիսլիկի ղերի մասին է պատմում Զ. Ա. Հացագործյանի և Ռ. Ա. Տարախնչյանի համատեղ ղեկուցումը:

Զ. Ի. Քյազիմ-Ջադեն վերլուծում է էներգետիկայի զարգացումը Աղրբեջանում, շոշափելով նաև կադրերի պատրաստումը և էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ գիտատեխնիկական գրականության ստեղծման պրոբլեմը:

Վ. Ռ. Տոգոնիձեն լուսաբանում է Անդրկովկասյան երկաթուղու շինարարության զարգացման հիմնական փուլերը:

Վ. Մ. Յանվարաշվիլին քննարկում է մեքենաշինական տեխնիկայի զարգացման հարցերը Սովետական Վրաստանում:

#### ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Տ. Լ. Բաքրաձեն ծանոթացնում է XI դարի վրաց բժիշկ Կանանելու գրքի բովանդակությանը:

Խ դարի միջինասիրական բժիշկ, գիտնական Աբուբեքր ալ-Բուխարուն է նվիրված Ն. Գ. Կուղարիի զեկուցումը:

Երկու զեկուցում նվիրված է Հայկական ՍՍՀ-ում բժշկության առանձին ճյուղերի դարգացման լուսարաննանը. Վ. Մ. Մարտիրոսյանինը՝ օֆորինուարինգուղիայի, Վ. Մ. Փենսոյանինը՝ ռենտղենարանության:

Խ. Ն. Փիրումովը տալիս է Հայկական ՍՍՀ-ում մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների ուսումնասիրության պատմությունը:

Զ. Գ. Թագդիսին կանգ է առնում բժշկության հետ փիլիսոփայության կապի վրա, նշելով, որ բժշկության վրա փիլիսոփայության ազգեցությունը մեկն էր այն պատճառներից, որոնք նպաստեցին արևելքում բժշկության րուսն զարգացումը:

Ի. Ի. Տոպուրիան և Գ. Շ. Կորչիլավան համառոտակի նկարուսում են ԽIX դարի վերջի XX դարի սկզբների հույն բժիշկ Տրիանտաֆիլիպիսի կյանքն ու դործունեությունը, որը ստանալով եվրոպական և սուսական կրթություն այնուհետև իր ամբողջ կյանքն անց է կացրել թաթումիսում:

Մ. Մ. Շենգելիան ծանոթացնում է Պ. Ա. Կլապիտոնիշվիլու ուսուական կրթությամբ առաջին վրաց բժշկի, գործունեությանը վրաստանում և Աղրբեջանում (ԽIX դարի առաջին կես):

Գ. Թ. Էֆենդիկի զեկուցումը նվիրված է ներքին հիվանդությունների գծով աղբրեջաներեն գիտական տերմինների և դասագրքերի ստեղծման պատմությանը:

#### ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. Աղախանյանը կանգ է առնում Սովետական Հայաստանում գյուղատնտեսության սոցիալիստական վերականգնման շրջանում կատարված ջրատնտեսական աշխատանքների և դասագրքերի ստեղծման պատմությանը:

Հայաստանում ծխախոտագործության մուտքի և զարգացման մասին պատմական տեղեկություններ է հայտնում Մ. Ա. Գյուլխասյանը:

Վ. Ա. Դարյանը համառոտակի տալիս է շերամապահության տեխնիկայի զարգացման պատմությունը Հայաստանում հնուց մինչև մեր օրերը:

Զ. Խ. Դիլանյանի զեկուցումը նվիրված է կաթնատնտեսության զարգացման, իսկ Ա. Մ. Կոթողյանինը՝ մեղվարուծության գիտակառութական աշխատանքների պատմությանը Հայաստանում:

Կ. Բ. Ղեժավան ծանոթացնում է Վրաստանում գյուղատընտեսության մեքենայացման պատմության 80-ամյա մի շրջանի (1850—1929 թթ.):

Հայկական ՍՍՀ-ում բուսաբուծական գիտության հիմնադիր Մ. Գ. Թումանյանի կյանքի ու գործունեության մասին է Ա. Ա. Մաթևոսյանի ղեկուցումը:

Խ. Պ. Միրիմանյանը քննարկում է հողագիտության զարգացման առանձնահատկությունները Հայաստանում մինչդոկուլակյան շրջանում:

Է. Ս. Մորիկյանը շոշափում է IX—XIV դարերում Հայաստանում գիտական այգեգործության զարգացման հարցերը:

Վրացական գյուղատնտեսական ինստիտուտի հիմնադրման պատմությանը և մասնագիտական կադրերի պատրաստման գործում նրա դերին է նվիրված Ի. Ֆ. Մարիշվիլու և Գ. Գ. Տողուայի ղեկուցումը:

Հ. Մ. Խաչատրյանը համառոտակի վերլուծում է Կիլիկյան հայկական թագավորության շրջանի (XI—XIV դարեր) կենդանաբուծական գրականությունը:

Վ. Մ. ՄԱՆՈՅԱՆ